ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2023 թվականի №-Ա

ԼԵՆԱ ԵՂՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի դեկտեմբերի 13-ի №07/11.1/10433-2022 և դեկտեմբերի 27-ի №01/11.1/10976-2022 գրություններով ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում հայտնաբերվել է 1740ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող անսարք ուժեղարարով հեռուստա-տեսային ալեհավաք, որը տեղակայված է Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Մյասնիկյան փողոցի №13 հասցեի տան (սեփականության իրավունքով գրանցված են Համազասպ, Ռոզա, Լիաննա, Լիլյաննա և Շուշաննա Եղոյանները) տանիքին,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Համազասպ, Ռոզա, Լիաննա, Լիլյաննա և Շուշաննա Եղոյաններին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնա-ժողովի 2023 թվականի հունվարի 3-ի №ՍԾ/34.2-Մ2-9/1-2023 գրությունը, որին ի պատասխան Լենա Եղոյանը տեղեկացրել է, որ վերջինիս կողմից օգտագործվող ալեհավաքի աշխատանքը դադարեցված է,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և Լենա Եղոյանի գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 1740ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-

րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Լենա Եղոյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 1740ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լենա Եղոյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------2023թ.